ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ _____ «10» 01 2019թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահին և անդամներին

Հատուկ կարծիք

Սույն թվականի հունվարի 11-ի ՀՀ ՀՊ հերթական նիստի օրակարգի 1-ին կետի "ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի ապրիլի 9-ի թիվ 1/1 որոշման մեջ փափոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշման նախագծի (էլեկտրոնային եղանակով ստացված՝ 09.01.2019թ.) բովանդակության վերաբերյալ հայտնում եմ հետևյալ կարծիքը՝

- Նախագծի հավելվածի 11,12,13 և 14,15 հորիզոնականների անվանական բաշխվածությանը համաչափ չէ: Այսպես, ՀՀ ՀՊ գլխավոր քարտուղարի օգնականի հաստիքները թվով 2 են այն դեպքում, երբ ՀՀ ՀՊ թվով 6 անդամների համար նախատեսված է օգնականի ընդամենը 3 հաստիք:
- Նախագծի հավելվածում կառուցվածքային ստորաբաժանումների խորհրդականների հաստիքների բաշխվածության ակնհայտ անհամաչափություն կա: Այսպես, հաշվեքննություն իրականացնող և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների կազմում ընդգրկված խորհրդականների թիվը կազմում է ընդամենը 25, որից միայն 7-ը (շուրջ 28%) ընդգրկված են Մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի

ՄՏԻՀ № Հրամ-23
«10» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

վարչության կազմում, ու դրա արդյունքում վերջինիս հաստիքների թվաքանակը հասնում է 16-ի, որը կազմում է ՀՀ ՀՊ հաշվեքննություն իրականացնող և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների ընդամենը 113 հաստիքների շուրջ 14% այն դեպքում, երբ մնացած 11 հաշվեքննություն իրականացնող և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող վարչությունների համար այդ ցուցանիշը չի գերազանցում 8%:

- Նախագծի հավելվածում հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներից 6-րդ վարչության կազմում նախատեսված չէ վարչության պետի տեղակալի հաստիք այն դեպքում, երբ հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում՝ Մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության կազմում առկա է վարչության պետի տեղակալի թվով 2 հաստիք, ինչը ևս անհամաչափ է:

Ելնելով վերոգրյալից, հայցում եմ՝ "Հաշվեքննիչ պալատի մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների համաձայն, կցել սույն հատուկ կարծիքը քննարկվող հարցի մասին համապատասխան որոշմանը:

Շնորհակալ եմ համագործակցության համար:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ